Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 965 - Ա
որոշման

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ»
ԾՐԱԳԻՐ

1.	**Ծրագրի նպատակը**	ՍՕՍ Մանկական Գյուղեր Միջազգային կազմակերպության, ինչպես նաև իր անդամ ընկերակցություն հանդիսացող «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի համար ռազմավարական նշանակություն ունի ճգնաժամային իրավիճակներում, այդ թվում՝ պատերազմների, համավարակների, տարրերային աղետների և այլ իրավիճակների հետևանքով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և նրանց ընտանիքներին մարդասիրական աջակցության ցուցաբերումը: Այդ նպատակով կազմակերպությունը իրակա-նացնում է ծրագիր՝ Հայաստանի Հանրապետություն սույն թվականի սեպտեմբեր ամսին տեղահանված երեխաների և նրանց ընտանիքների սոցիալ-հոգեբանական և նյութական աջակցության տրամադրման նպատակով: Այս ծրագիրն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների հետ սերտ համագործակցությամբ:
2.	**Ծրագրի բարեգործական որակման նպատակը**	Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների մասին օրենքներով նախատեսվող արտոնություններից:
3.	**Բարեգործը և ֆինանսավորման աղբյուրը**	Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում ՍՕՍ Մանկական Գյուղեր Միջազգային կազմակերպությունը
4.	**Ծրագրի կատարողը**	Ծրագիրն իրականացնում է «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը (ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, ք. Երևան, Հրաչյա Քոչարի 8 բնակարան 18-19):
5.	**Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը**	Ծրագիրն իրականացվում է ՀՀ Տավուշի մարզի Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան, Բերդ համայնքներում: Բնագավառը՝ սոցիալական:
6.	**Ծրագրի բյուջեն**	36,914,400 դրամ**:**

7.	**Բարեգործություն ստացողը**	Ծրագրում ընդգրկված են Լեռնային Ղարաբաղից տեղահանված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 450 շահառու (100 ընտանիք)
8.	**Ծրագրի իրականացման տևողությունը**	2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի փետրվարի 28-ը:
9.	**Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը**	1. Ծրագրի շահառուներին նյութական աջակցության տրամադրում ընդհանուր 35,314,400 դրամի չափով, նախատեսվում է 2023 թվականի դեկտեմբերի 30-ից մինչև 2024 թվականի փետրվարի 28-ը ընկած ժամանակահատվածում: 1) ծրագրի շահառուներին կահույքի տրամադրում՝ 17,657,000 դրամի չափով, 2) ծրագրի շահառուներին սեզոնային հագուստի և կոշիկի տրամադրում՝ 17,657,400 դրամի չափով: 2. Ծրագրի մասնագիտական անձնակազմի՝ 11 սոցիալական աշխատողի, 3 հոգեբանի և 1 ծրագրի համակարգողի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ կազմում է 1,600,000 դրամ (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում), ովքեր պետք է իրականացնեն շահառուների նույնականացում, կարիքների գնահատում, խորհրդատվություն, ուղղորդում, անհատական և խմբային հոգեբանական խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում՝ կարիքահեն դասընթացների կազմակերպում /օրինակ ծնողավարման հմտություններ/:
10.	**Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**	1) ծրագրի շահառուներին տրամադրելու նպատակով կահույքի ձեռքբերման աշխատանքների իրականացում ՝ 17,657,000 դրամ, 2) ծրագրի շահառուներին տրամադրելու նպատակով սեզոնային հագուստի և կոշիկի ձեռքբերման աշխատանքների իրականացում՝ 17,657,400 դրամ:
11.	**Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը**	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում

12.	**Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ**	Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ ներքին գործերի նախարարության, Միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոնների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ինչպես նաև ՀՀ Տավուշի մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայն շրջանակների հետ:
13.	**Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը**	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի համար 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

29.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ